

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն



ԵՏ խաղալոյ անցանելոյ մերթ սաղապաճեմ դեգերանօք եւ մերթ արշալակի ընթացիւք՝ ՚ի զնին եւ ՚ի ծանօթ հանուրց սահմանաց քաղաքաբնակ երկրի, աշխարհագրական պատճենիւս, զօրէն արանց բազմաշրջութեամբ յածելոց ՚ի տար աշխարհս, եւ այնոցիկ մանաւանդ որոց եհաս զբովանդակ երկրաւ պատել, ախորժաբար արդ զերեսս հաստատեմք դառնալ դադարել յանմուաց կայանս հանգստեան մերոյ, ՚ի բնավայրն հայկեան տոհմիս. զուզընթացիկս ունելով զհօրամոյն համազգիս, զուցէ թէ եւ յառաջահասս: Արդ զոր նոքա գովանի եռանդեամբ ՚ի վաղուց հետէ փափազանօք խնդրէին՝ տեսանել զնկարագիր երկրի զիւրեանց նուիրական հայրենեաց, եւ զոր մեր իսկ ըղձումն եւ խոստումն յուսացուցանէր ՚ի հերուն, ընծայեմք աւազիկ զայս ՏԵՂԱԳԻՐ ՀԱՅՈՅ ՄԵԾԱՅ. քանզի զՊորուն եւ զայլոց ոմանց հայաբնակ աշխարհաց նկարագիրս՝ վաղագոյն հատուցաք ՚ի կարգի համաշխարհական տեղադրութեանս, իբրու ոչ սեփականաց առաջնոց հաւուց ազգիս, իբրեւ զայս՝ զոր այժմն առաջի առնեմք, ընդարձակագոյն բանիւք. որպէս եւ օրէն է ամենայն աշխարհագրաց, զիւրեանց երկրին ճառս յերկարել, զայլոցն ՚ի չափու ունելով: Իսկ մեզ եւ առաւելութեամբ հանդերձ այս պարտք ՚ի վերայ կային. մի՛ զի ոչ գտանի առ օտարս ոճով ինչ ասացեալ զբովանդակ հայաստանեացս, նա եւ երկարապատումքն իսկ ՚ի նոցանէ եւ բազմահատոր մատենից հեղինակք աշխարհագիրք՝ յերկուս էջս կամ թուղթս բովանդակեն զծանօթութիւն երկրիս հայոց. եւ միւս եւս, զի աշխարհս մեր աշխարհ հին է, եւ ՚ի կարգի մատենագրական եւ վաղնջական անուանեալ աշխարհաց, եւ նման նոցին բազում մասամբ թաքուցեալ ընդ սրբազան այլ եւ տիրական քօղով. սակայն ոչ եւ ՚ի սակի իսպառ մուացելոցն եւ անցելոց, չասեմ երկրի անցելոյ՝ այլ բնկին իւրոյ սրայազատի, նման Վաղդէացւոցն եւ Սարաց եւ Փիւնիկաստան ազանց, այլովքն հանդերձ. այլ մերս ազգ եւ վայր՝ անցեալ եւ դեռ կայ, ոչ որ երիցագոյն քան զնա, եւ ոչ որ դարձեալ ՚ի հնոցն՝ նորութեան ընդել եւ ընկալուչ քան զնոյն. որպէս զի եւ բնութիւն իսկ իւր յորդոր լինի ամենայն իմաստասէր մտաց՝ ՚ի փոյթ քննութեան եւ գիտութեան երկրի Ազգին, որ յանդգնի ասել ոչ միայն իւր զայն՝ այլ եւ հանուրց նախնական հայրենիս, այլ սեփական՝ ինքեան միայնոյ: